«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Մատիկյան

Ուսումնական հաստատություն՝ Աբովյանի թիվ 8 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն..... 3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ
1.1 Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը մարդկանց կյանքում.....5
1.2 Արդի ժամանակներում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաների տեսակները.....6
Համակարգիչը, համացանցը և երեխան.....6
Հեռախոսը և երեխան.....10
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ: 2.1 ՏՀՏ-ի կիրառումը հայոց լեզվի և գրականության դասաժամերին.....12
2.2 Կրթական կայքերի դերը ուսուցչի մասնագիտական և սովորողի հոգեբանական զարգացման գործում 13
2.3 Կրթության, տեղեկատվության և բարոյականության փոխկապակցվածությունը 15

Եզրակացություն 17
Օգտագործված գրականություն 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկության զարգացման պատմության մեջ երբևէ չեն եղել փոփոխությունների ավելի հզոր ուժ և խթան, քան տեխնոլոգիաները: Տեխնոլոգիաները փոխել են ամեն ինչ՝ մարդկանց ապրելակերպը, սնվելու ձևը, տեղափոխվելու միջոցները, հաղորդակցման ձևը և անգամ մտածելակերպը:

21-րդ դարը տեղեկատվական և հաղորդակցական տոխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՀՏ) դարաշրջան է, որոնց սրընթաց զարգացումն ամբողջ աշխարհում նոր պահանջներ է դրել կրթական համակարգերի առջև: Երեխաները շատ վաղ, դեռևս նախադպրոցական տարիքից են ընկղմվում ՏՀՏ աշխարհը: Հեռախոս, պլանշետ, համակարգիչ…. այս ամենը դառնում է նրանց առօրյայի անբաժան մասը, գերող իրականությունը: Դպրոցն իր ավանդական միջավայրով, տպագիր գրքերը, տետրերը, թուղթն ու գրիչն արդեն չեն համապատասխանում երեխաների իրական հետաքրքրություններին ու ձգտումներին:

Ուստի, ներկա աշխարհում ՏՀՏ-ները դարձել են արդիական կրթության հրամայական և ուսուցման նոր գործիք: Ժամանակակից կրթական համակարգերում դրանք անչափ գործունակ միջոց են, որոնք օգնում են աշակերտներին խորացնել ուսուցանվող նյութի իմացությունը, հասնել դպրոցական առարկաների ավելի ընդգրկուն ընկալման,ստանալ ավելի բազմազան և շատ դեպքերում անձնական պահանջմունքներին ավելի համապատասխան տեղեկատվություն, կիրառել ժամանակակից գնահատման,ինքնագնահատման և ուսուցման մեթոդներ: ՏՀՏ-ները հնարավորություն են ընձեռում մուտք գործել մի հրապուրիչ ուսուցողական միջավայր, որտեղ հասանելի են գրերթե անսահմանափակ քանակությամբ նյութեր ու տեղեկություններ, և ամենակարևորը՝ գիտելիքի ձեռքբերման նպատակով ընդլայնել ուսումնական ծրագրերի ու դասագրքերի շրջանակները, փոխել հին մոտեցումներն ու ուսուցման մեթոդները, առաջադրել և իրագործել բոլորովին այլ՝ որակապես նոր խնդիրներ:

Մեր օրերում համացանցային կրթական կայքերը և կրթական էլեկտրոնային ռեսուրսներն արդյունավետ ուսումնաօժանդակ գործիքներ են, որոնք նպաստում են ուսուցչի աշխատանքի որակի բարձրացմանը, նրանց մասնագիտական գիտելիքների ու ՏՀՏ հմտությունների զարգացմանը և բարձրացնում աշակերտների առաջադիմությունը, հետաքրքրվածությունն ու մոտիվացիան: Դրանք նպաստում են նաև աշակերտներին ուսումնական գործընթացում ակտիվորեն ըդգրկելուն, քանի որ թույլ են տալիս ուսուցչին և աշակերտին հաղորդակցվել միևնույն միջավայրում և նույն «լեզվով»:

Արդի ժամանակներում առանց տեղեկատվական տեխնոլոգիաների ներկայության կրթության և հասարակական գործունեության ցանկացած բնագավառում առաջընթացը հնարավոր չէ պատկերացնել և առանց դրանց գոյության աշխատանքը անհնար է դառնում:

Ցավոք սրտի, համակարգիչը և, հատկապես՝ համացանցը, աստիճանաբար մեկուսա-

ցնում են երեխաներին իրականությունից, տանում դեպի երևակայական, վիրտուալ աշխարհ: Երեխաները կարող են աստիճանաբար ընդունել համացանցային կամ երևակայական աշխարհը որպես առաջնային, և կենսական խնդիրների լուծումները փնտրել իրականությունից կտրված եղանակներով:

Այսպիսով՝ մեր աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը երեխաների հոգեվիճակի վրա, ինչպես նաև զետեղել նյութեր, որոնք կարող են օգնել ուսուցչին և ծնողին:

ԳԼՈՒԽ 1. Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ

1.1Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը մարդկանց կյանքում

Հասարակությունների զարգացման ու մշակութային առաջադիմության հետ զուգընթաց, կապի միջոցները նույնպես կատարելագործվեցին, մտքերն ու լուրերը փոխանակելու համար մարդկությանն ընձեռեցին նոր հնարավորություններ: Այնպես որ մեծ թվով գիտնականներ, նկատի առնելով տեղեկությունների, մտքերի ու մարդկային խոհերի փոխանակման մեջ նորագույն տեխնոլոգիաների ակնառու դերը՝ ժամանակակից պատմական շրջանն անվանել են «Տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակաշրջան»:

Այդ լրատվամիջոցները մեծ դեր ունեն նոր սովորությունների ձևավորման, համաշխարհայնացման, մարդկային վարքագծի ու տրամադրության փոփոխության և մյուս ժողովուրդների հետ դրացիական հարաբերություններ սկսելու հարցերում:

Տեխնոլոգիաների ոլորտում համակարգչի մուտք գործելով, մարդկային կյանքը ավելի մեծ փոփոխությունների ենթարկվեց: Համացանցային հասարակությունը պատճառ է դարձել, որ համընդհանրությունը և տեխնոլոգիական ցանցաշինությունը մուտք գործեն նաև ուսուցման ոլորտ: Տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների հեղաշրջման հետևանքով հեղաշրջվել են նաև ուսուցողական, տնտեսական ու մշակութային ոլորտները և ստեղծվել է մի նոր աշխարհ: Ներկա դարաշրջանում տեղեկատվությունն ու հաղորդակցությունը համարվում են որպես երկու հիմնական տարեր: Ժամանակակից մարդը հարկ եղած տեղեկությունները ձեռք բերելու համար արդեն այլ մարդու կարիքը չի զգում,համացանցը տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվությունը:

Այժմ մենք ապրում ենք տեղեկատվության վրա հիմնված, հաղորդակցական կապերով օժտված ժամանակաշրջանում: Գոյատևելու համար մեզ անհրաժեշտ են կապի միջոցներ ու հաղորդակցության տեխնոլոգիաներ: Մրցակցության կարողությունը, տնտեսական ապահովությունը և ազատությունը, այսօր առավել քան երբևէ դարձել է միջազգայնորեն ընդունված սկզբունք՝ որևէ ժողովրդի հաջողությունը չափելու համար, և այդ տեխնոլոգիաներին հասանելի դառնալուց բացի, այդ կարգի հաջողության հասնել ու կարևոր ազդակներից մեկը, դրանց օգտագործման գիտելիքներին տիրապետելն է: Անշուշտ տեղեկատվական տեխնոլոգիաները, ողջ աշխարհում, թե՛ դրական, թե՛ բացասական առումով փոփոխության են ենթարկել մարդկային հարաբերությունները:

Անկասկած, մարդկային կյանքի պատմության ոչ մի ժամանակաշրջան տեղեկությունների փոխանակման տեսանկյունից այսքան արագ ու ընդարձակ չի եղել: Այդ պատճառով, ներկա ժամանակաշրջանի կարևորագույն յուրահատկություններից են համարվում տեղեկատվության արագությունը, ծավալն ու նրա մեծ նշանակությունը,

որի պատճառով էլ ներկա ժամանակաշրջանը անվանվել է տեղեկատվության պայթյունի ժամանակաշրջան:

1.2 Արդի ժամանակներում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաների տեսակները

Այժմ կներկայացնենք արդի ժամանակներում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաների ամենատարածված տեսակները:

Համակարգիչը , համացանցը և երեխան

Համակարգչի դրական ազդեցությունները

Վերջին տարիներին համակարգիչը դարձավ հասարակական կյանքի բոլոր ասպարեզների անբաժան մասը: Համակարգիչների ի հայտ գալը և կայծակնային տարածումը՝ տնտեսության զարգացման տեսանկյունից, անշուշտ, դրական երևույթ է, սակայն համակարգչային տեխնոլոգիաներից օգտվողների թվի աճի և դրա ընդլայնումից հանդիպում ենք նաև մարդու հոգեկան ոլորտի վրա համակարգչի բացասական ազդեցության երևույթների:
Համացանցն այսօր ոչ միայն կապ և տեղեկատվություն է տրամադրում, այլև այնտեղ արծարծվում և բարձրացվում են սոցիալմշակութային բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումը հաղորդում է դրանց նոր բովանդակություն: Այսօր երեխան աշխարհը ճանաչում է համակարգչի միջոցով. խաղեր, մուլտֆիլմեր, նկարներ և այլն: Համացանցը և համակարգիչը օգտակար և անհրաժեշտ ինֆորմացիայի աղբյուր են: Տարբեր կենդանիների, հեքիաթային հերոսների պատկերներն ու նկարները, երեխաներին հուզող բազմաթիվ հարցերի պատասխանները կարող են գտնվել համացանցում: Երեխաների ուշադրությունը, մտածողությունը, տրամաբանությունը կարելի է զարգացնել ճիշտ ընտրված խաղերի ու առաջադրանքների շնորհիվ:

Համակարգչի բացասական ազդեցությունները

Համացանցի լուրջ բացասական կողմերից մեկն այն է, որ այստեղ չի վերահսկվում ինֆորմացիան, չկան տարիքային սահմանափակումներ ու արգելքներ: Համացանցը լի է անորակ, չճշգրտված ինֆորմացիաներով, էրոտիկ բնույթի նկարներով ու տեսանյութերով, որոնք կարող են կլանել անգամ հասուն ու գիտակից մեծահասակներին: Չի բացառվում, որ երեխաները ևս նմանօրինակ ինֆորմացիաի հանդիպեն: Նախադպ-

ռոցական տարիքը, առավել ևս դեռահասության տարիքը սեռային ինքնագիտակցության, սեռական նույնականության ձևավորման, սեռային դերերի ու բնութագրերի յուրացման կարևոր շրջաններն են: Սեռերին ու սեռական կյանքին վերաբերող տեղեկատվության և տեսանյութերի, անառողջ փոխհարաբերությունների անարգելք ներկայացումը կարող է խեղաթյուրել դեռահասների ու պատանիների սեռական ոլորտի մասին պատկերացումներըԴեռահասների, պատանիների ու երիտասարդների մոտ կախվածություններ են առաջանում սոցիալական ցանցերից, որոնք դարձել են հաղորդակցման այլընտրանքային ձևեր, ծանոթության և շփման հասանելի միջոցներ: Եվս մեկ խնդիր է համացանցային, այսպես կոչված, ժարգոնը կամ լեքսիկոնը՝ բառապաշարը:

Համացանցի վտանգները երեխայի հոգեկան առողջության համար

Մարդկությունը բավական շուտ գիտակցեց համակարգչի վնասակար ազդեցությունը մարդու ֆիզիկական առողջության վրա, սակայն դեռևս քիչ են խոսում մարդ ու հոգեկան աշխարհի վրա համակարգչի ազդեցության մասին: Համակարգչի և համացանցի ազդեցությունը երեխայի հոգեկան զարգացման վրա բացասական հետևանքներ կարող է ունենալ: Նախ համակարգչի առջև շատ ժամանակ անցկացնելու արդյունքում երեխաների մոտ ընդհանուր թուլություն և հոգնածություն է դրսևորվում, քնի խանգարումներ: Բացասական հետևանքները կարող են իրենց հետքը թողնել հոգեկան գործընթացների վրա (երեխայի հիշողությունն է թուլանում, դպրոցում դասերի ժամանակ դըժվարությամբ են կենտրոնացնում ուշադրությունը, հասկանում ու դատողություններ անում), հոգեվիճակների, անձնային հատկությունների ձևավորման վրա, միջանձնային հարաբերությունների ոլորտում: Առավել շատ են հանդիպում հուզական խաթարումները, դրդապատճառային ոլորտի ձևավորման բացասական միտումները՝ կապված ինֆորմացիոն ներգործության հետ:

Համակարգչային կախվածությունը անչափահասների շրջանում կարող է հանցավոր վարքի (արատավոր ցանկություններ, կասկածամտություն, ստախոսություն, հակամարտություն և այլն) դրսևորման պատճառ դառնալ, առաջացնել լքվածության, տագնապի զգացում:

Երեխան և համակարգչային խաղերը

Մի շարք ուսումնասիրությունների համաձայն՝ համակարգչային խաղերն ունեն դրա կան ազդեցություն: Դրանք օգնում են հուզական լիցքաթափմանը, գրավոր խոսքը դառնում է ավելի ճկուն, զարգանում են հիշողությունը, ուշադրությունը, տրամաբանական մտածողությունը, օպերատիվությունը, նուրբ շարժային հմտությունները ձեռքում, ձեռքի աչքի համակարգումը, օբյեկտների տեսողականընկալումը, ստեղծագործական մտածողությունը, բարելավվում է սենսոմոտորիկան (զգայաշարժական գործընթացների կոորդինացիա) և այլն:
Համակարգչային խաղերը երեխային սովորեցնում են դասակարգել ու ամփոփել, մտածել, վերլուծել անկանոն իրավիճակներում, հետամուտ լինել իր նպատակին, բարելավել մտածողության հմտությունները և այլն:

Համակարգչային խաղերի մի մասը բացասաբար են անդրադառնում երեխաների վրա: Վերջին շրջանում դրանք աստիճանաբար վերածվել են բոլոր տարիքի երեխաների զանգվածային հոգեբանական համաճարակի պատճառ: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը,որաշխարհի տարբեր վայրերում անձնական համակարգիչների և խաղային կցորդների վաճառքն ավելացել է տասնյակներ անգամ, իսկ խոշոր քաղաքներում բնակվող ընտանիքների 40-80%-ն արդեն տանը համակարգիչ ունի, ապա կարելի է ասել, որ համակարգչային խաղերը, հեռուստատեսության հետ մեկտեղ, փոքրիկների վրա բացասական ազդեցության լուրջ գործոն են դարձել: Համակարգչային խաղերն ունեն բացասական ազդեցություն. տուժում են ֆիզիկական և հոգեկան առողջությունը, անձի բնականոն ձևավորումը, ուսման առաջադիմությունը, վարքը և այլն:

Դերային մենամարտերը և ռազմավարություն խաղերը հիմնականում ագրեսիվ լաբիրինթոսների վերարտադրություններ են, որտեղ ամեն վայրկյան տարբեր անկյուններից դուրս են թռչում բազմաթիվ սարսափելի կերպարներ, որոնց նպատակը խաղացողին, այսինքն՝ երեխային, «սպանելն» է: Հարցը դրվում է կա՛մ նա, կա՛մ իրենք տարբերակով: Այլընտրանք չկա: Իրական կյանքում այդ խաղերի միակ համարժեքը կարող է լինել գիշերային մղձավանջը: Արտերկրում, նույնիսկ, կազմակերպվում են նման խաղերի առաջնություններ, որտեղ բոլոր հրեշներին "սպանելուց" հետո, երեխաները սկսում են պայքարել միմյանց դեմ: Առաջնությունն անցկացվում է «Սպանիր բոլորին և ստացիր մրցանակը» կարգախոսով: Ողջ աշխարհի ինտերնետային ակումբներում երեխաները ժամերով նստում են համակարգչի առջև և սեղմում ստեղնաշարի կոճակները հարվածելու, սպանելու և ոչնչացնելու համար: Թափառելով համակարգչային լաբիրինթոսում՝ երեխան ակամա դառնում է թեկուզ վիրտուալ, բայց սպանության մեղսակից: Խաղերի մեծահասակ կողմնակիցները վստահեցնում են, որ

այնտեղ բռնություն չկա, քանի որ խաղն իրական չէ: Եվ ընդհանրապես, ում դուր չի գալիս, թող չխաղա: Բայց չէ՞ որ երեխաներն ու դեռահասները, հետաքրքրասիրությունից ելնելով կամ ցանկանալով պարզապես փորձել ուժերը, չեն կարող դիմադրել խաղալու գայթակղությանը:

Կան նաև չափազանց բարդ, այսպես ասած, քաղաքակրթություն-խաղեր: Այնտեղ խաղացողը հնարավորություն ունի պատմությունը զարգացնել ըստ իր ցանկության՝ փոքրիկ ցեղախմբից ստեղծելով մեծ գերտերություն և դառնալով դրա տիրակալը: Դրա համար երեխային անհրաժեշտ է գիտելիքների որոշակի պաշար և համարձակություն, որպեսզի նա կարողանա "կառավարել" աշխարհն իր ուզած ձեւով:Համակարգչային և ընդհանրապես ամեն տեսակ խաղերը հոգեբանորեն այնպիսի կառուցվածքով են ստեղծված, որ անընդհատ ունեն հաճույքի մեխանիզմ: Խաղն ինքնին ունի այդ սկզբունքը՝ խաղացողին հաճույք պատճառել և բավարարել նրա հոգեբանական կամ նյութական պահանջմունքները: Այս առումով համակարգչինը ավելի էֆեկտիվ է և գրավիչ:

Համակարգչային խաղերից կախվածության հիմնական նշաններն են՝

- համակարգչով աշխատելու ընթացքում տրամադրության բարձրացում
- համակարգչից կամ խաղից կտրվելու անկարողություն, իսկ կտրվելու դեպքում՝ ագրեսիայի հասնող դյուրագրգիռ վիճակի առաջացում
- տնային գործերի անտեսում
- մարդկանց հետ շփվելիս առավելապես համակարգչի հետ կապված թեմաների քննարկում,
- հրաժարում ընկերների հետ շփումից
- համակարգչի օգտագործումն առաջացնում է դիսթրես
- համակարգչի օգտագործումը վնաս է պատճառում մարդու ֆիզիկական, հոգեբանական, միջանձնային, ընտանեկան, տնտեսական սոցիալական կարգավիճակին

Հետևյալ նշանները վկայում են առաջացած կախվածության մասին.

- անընդմիշտ օնլայն լինելու ցանկություն.
- անհանգստություն, ջղայնություն, ագրեսիվություն
- համացանցի բացակայության պարագայում ուշադրության պակաս
- անձնական հիգիենային չհետևելը
- անառողջ սննդային վարքագիծ
- դպրոցական առաջադիմության անկում
- կռիվներ, վեճեր տան անդամների հետ համակարգչի պատճառով
- իրական մարդկանց հետ շփվելու ցանկության բացակայություն
- Կախվածության ֆիզիկական նշաններից են աչքերի չորությունը, քնի խանգարումները մեջքի, պարանոցի, դաստակի ցավերը:

Հեռախոսը և երեխան
Բջջային հեռախոսների ճառագայթումները և ազդեցությունը

2011թ.-ին առողջապահության համաշխարհային կազմակերպությունը բջջային հեռախոսները դասակարգելէ որպես քաղցկեղի որոշակի տեսակների զարգացման ռիսկային գործոն:

Ուրեմն փոքրահասակների համար բոլորովին էլ անվնաս խաղալիք չէ բջջայինը, որով իրենց անհանգիստ երեխաներին հանգստացնում և զբաղեցնում են ծնողները:

Բջջային հեռախոսների ճառագայթների ազդեցության աստիճանը կախված է դրանից արձակվող ազդանշանի հզորությունից: Այս հեռախոսների ճառագայթման առավելագույն ուժը դրսևորվում է կանչի ժամանակ: Անգամ չմիացած վիճակում կամ գոտկատեղին ամրացված սարքը մշտապես կապի մեջ է մոտակա բազային կայանի հետ և հետևապես արձակում է էլեկտրամագնիսական ալիքներ:

Ինչպես են բջջայիններն ազդում մեր երեխաների վրա

Վերջին մի քանի տարիների ընթացում բջջային հեռախոսները «գրավել են» դպրոցների միջանցքները: Դրանք ինքնատիպ ապահովագրության ձև են դարձել ծնողների համար և միևնույն ժամանակ թմրամիջոց՝ երիտասարդների համար... Դպրոցականները բջջային հեռախոսները հիմնականում օգտագործում են խաղերի և ընկերների հետ շփման համար: Այն երեխայի մեջ վերացնում է միայնության զգացումը՝ օգնելով խուսափել սթրեսից, երբ նա հանկարծ դպրոցական օրվա ավարտին մենակ է հայտնվում տանը: Ոմանց համար բջջային սարքավորումներն ինքնարտահայտման միջոց են: Առանց այդ առարկայի նրանք միայնություն ու դատարկություն են զգում: Ուստի, դպրոցներում բջջային հեռախոս օգտագործելու արգելքը կարող է «լքվածության» զգացում առաջացնել, ինչի հետևանքով հատկապես դեռահասը կարող է ինքնամփոփ դառնալ ու մեկուսանալ աշխարհից: Բջջայինի կարիք հենց ծնողներն ունեն, որոնք կարծում են, թե իրենց զավակների կողքին են գտնվում՝ չնայած որ դա այդպես չէ: Նրանք չեն գիտակցում, որ այդ առարկան խանգարում է երեխային «մեծանալ», ինչն էլ, իր հերթին, նշանակում է տարբեր իրավիճակներում ինքնուրույն որոշումներ կայացնել: Եթե երեխան գիտի, որ կարող է ցանկացած պահի, նույնիսկ ամենահասարակ հարցով զանգահարել ծնողին, ապա դա միանշանակ կախվածություն է առաջացնում. արդյունքում՝ բջջայինը կարող է հանգեցնել մանկամտության:

Երեխաներին չափից շուտ հեռախոսներ տալը, եթե խիստ անհրաժեշտությունը չկա, խրախուսելի չէ: Երեխայի համար դա հաճախ ոչ թե շփման միջոց է, այլ մեծերին նմանվելու, ինքնահաստատման փորձ:

ԳԼՈՒԽ 2 2.1 ՏՀՏ-ի կիրառումը հայոց լեզվի և գրականության դասաժամին

Գրականության և հայոց լեզվի դասաժամերին համակարգչի օգնությամբ պատրաստում ենք սահիկաշարներ, սխեմաներ: Օգտվում ենք տեսադասերից:Կազմակերպում ենք տեսադասերի դիտում և մեկնաբանում:

Մայրենիի դասաժամերին համակարգչով կազմակերպում ենք խաղեր: «Հեքիաթ» թեման անցնելիս ՏՀՏ-ով կազմակերպում եմ մուլտֆիլմերի, կինոնկարների դիտում («Անահիտ», «Անբան Հուռին», «Սասունցի Դավիթը», «Ձախորդ Փանոսը», «Քաջ Նազարը»), որը երեխայի հոգեբանական զարգացման գործում մեծ դեր է կատարում:

Սովորողների մոտ համակարգիչների, սմարթֆոնների, պլանշետների առկայության դեպքում առաջարկում եմ բացել տեսական նյութը, կարդալ և կատարել ընտրված առաջադրանքը:

9-րդ դասարանում հայոց լեզվի դասաժամին «բարդ նախադասությունն» թեման անցնելիս սահիկաշարների օգնությամբ էկրանին երևում է տեքստը: Հանձնարարում եմ տեքստից դուրս գրել պարզ նախադասությունները, դրանք միավորել և դարձնել բարդ նախադասությունների, կատարել հնչերանգային փոփոխություններ:

Կշռադատում և անդրադարձ փուլերը ևս կատարվում են ՏՀՏ-ի միջոցով: Էկրանին երևում են նախօրոք մշակված հարցերը, աշակերտները պատասխանում են հարցերին

Գրականության դասաժամին «Պ. Դուրյան» թեման ամփոփելիս սահիկաշարների միջոցով էկրանին երևում է հեղինակի դիմանկարը ,աշակերտը ներկայացնում է կենսագրությունը և ստեղծագործությունը: Այնուհետև էկրանին երևում է լճակի պատկերը («Լճակ» բանաստեղծություն): Աշակերտները մեկնաբանում են բանաստեղծությունը՝ դիտելով նկարը:

Խիստ անձնային-զգայական մոտեցում է պահանջում հարցերի հետևյալ խումբը, որը վերաբերում է «Սաադիի վերջին գարունը» ստեղծագործության ձևի ընկալման և արտահայտած տրամադրությանը:

Էկրանին երևում են հետևյալ հարցերը, աշակերտները պատասխանում են:

Ստեղծագործությա ո՞ր դրվագն է

1. Ամենահուզիչը
2. Ամենաերգեցիկը
3. Ամենագունեղը
4. Ամենաանսպասելին
5. Ամենատեսանելին

2.2 Կրթական կայքերի դերը ուսուցչի մասնագիտական և սովորողի հոգեբանական զարգացման գործում

Կրթական կայքերը նմանօրինակը չունեցող էլեկտրոնային ինտերնետ ռեսուրս են, որոնք միավորում են կրթության ամբողջ ուսումնական համալիրը: Այն միաժամանակ և՛ դասագիրք է, և՛ խնդրագիրք, և՛ առջադրանքների ու թեստերի հսկայական շտեմարան: Յուրաքանչյուր դպրոցական առարկայի յուրաքանչյուր թեմա կրթական կայքերը պարունակում են մատչելի տեսական նյութեր և չկրկնվող առաջադրանքներ, վարժություններ և ամփոփիչ թեստեր:

Կայքը հնարավորություն է տալիս ուսուցչին անցկացնելը դասը կամ հանձնարարել դասարանային, տնային և ստուգողական առաջադրանքներ, իսկ աշակերտներին՝ սովորել դասերը կամ կատարել հանձնարարված առաջադրանքները առցանց: Աշակերտը կարող է ուղղակիորեն կայքում կարդալ իրեն հանձնարարված դասի տեսական նյութը, իսկ այնուհետև գործնականում ամրապնդել այն՝ կատարելով բազմաթիվ առաջադրանքներն ու վարժությունները, լուծել խնդիրներ, լրացնել ամփոփիչ թեստերը: ՉՊէ որ հիմնականում տնային առաջադրանքը կատարելու ընթացքում դասի ժամանակ բացատրված նյութը դառնում գիտելիք: Երբ երեխան առաջադրանքները կատարելու ընթացքում չի ստանում իր հարցի պատասխանը, լավագույն դեպքում նա դիմում է ծնողի կամ այլ անձի օգնությանը կամ փնտրում լուծումներ համացանցում, իսկ ավելի հաճախ ուղղակի չի կատարում առաջադրանքը: Շատ դեպքերում աշակերտը տնային առաջադրանքը չի կարողանում ինքնուրյուն կատարել, ինչի պատճառով այն դառնում է տհաճ պարտականություն: Ավելին՝ միշտ չէ, որ համացանցում կարելի է գտնել անհրաժեշտ տեղեկություններ կամ տեղադրվածը հավաստի է:

Անխոս, ժամանակակից աշխարհում մարդկանց համար առհասարակ և ուսուչի համար մասնավորապես, ամենաարժեքավորը ժամանակն է: Յուրաքանչյուր րոպեն թանկ է: Տեղեկատվական անսահման հոսքի ու հասարակության կողմից դպրոցին ներկայացվող օրեցօր աճող պահանջների պայմաններում դասագրքային նյութն այլևս բավարար չէ: Բացի այդ, դպրոցում դասաժամն ընդամենը 45 րոպե է, որի ընթացքում ուսուցիչը չի հասցնում բավարար ժամանակ հատկացնել անհատապես յուրաքանչյուր երեխայի: Առաջադրանքները դասագրքերում ևս խիստ սահմանափակ թվով են: Արդյունքում երեխան հաճախ չի հասկանում կամ խորապես չի յուրացնում նոր նյութը, ինչը հետագայում բարդություններ է հանգեցնում:

Կայքի միջոցով աշխատելիս ուսուցիչն էականորեն խնայում է իր ժամանակը, քանի որ, օգտվելով կայքի առաջադրանքների մեծ շտեմարանից, արագորեն ստեղծում և հանձնարարում է տնային, ուսուցողական և ստուգողական բնույթի առաջադրանքներ,իսկ համակարգը ավտոմատ ստուգում և գնահատում է աշակերտներին և վերլուծում նրանց ուսումնառության արդյունքները:

Կայքը տրամադրում է յուրաքանչյուր աշակերտի առաջադիմության ցուցանիշների համեմատական վերլուծություն իր համադասարանցիների արդյունքների ու

հանրապետության դպրոցների միջին ցուցանիշների համեմատությամբ: Մասնավորապես , այն տրամադրում է հետևյալ վիճակագրական տվյալներ.

- Առարկայի յուրացման աստիճանը,
- Աշակերտի արդյունքները հետևյալ ցուցանիշներով՝ կատարած առաջադրանքների քանակ, վաստակած միավորներ, կատարման վրա ծախսախ ընդանուր ժամանակ, մեկ առաջադրանքի կատարման միջին արագություն և առաջադրանքների լուծման համար կատարված փորձերի քանակ, ինչպես նաև թեմայի յուրացման աստիճան:

Այսօր ուսուցիչն ունի այնպիսի ուսումնական ռեսուրսի կարիք, որը կլինի արդյունավետ, համապիտանի, ընդհանրական և կնպաստի աշակերտների մոտիվացիայի ստեղծմանն ու դրա պահպանման ողջ ուսումնառության ընթացքում,ինչպես նաև նրա առաջընթացին ու առաջադիմության բարձրացմանը:

Կայքով դասավանդելը և սովորելը արդյունավետ է, հեշտ, հետաքրքիր և զերծ է ժամանակատարածքային բոլոր սահմանափակումներից:

2.3Կրթության, տեղեկատվության և բարոյականության փոխկապակցվածությունը

Ապրել մշտական փոփխությունների հորձանուտում: Ինչպես նշվեց կրթության ոլորտում փոփխությունների բազմակի ձևեր և հնարավորություններ կան: Դրանցից են փոփոխությունների-ներքին, արտաքին, վերևից-ներգև, ներգևից-վերև ձևերը, ամեն մեկն ել ունի իր դրական եվ բացասական կողմերը:Սակայն իմ նկատառման մեջ կարևորը ոչ թե դրանցից մեկին նախապատվություն տալն է, այլ հենց փոփխման գաղափարը: Դաստիարակության մեջ շատ հետաքրքրի գաղափար կա, երբ ասում են. թող երեխան փորձի և գա իր վերջնական համոզմանը, քանզի կողքից հորդորները ավելի փիչ արդյունավետ են քան սեփական փորձը: Ժամանակակից աշխարհը այնքան անասելի արագությանբ է փոփոխվում, որ ինչ որ բան կայուն պահելը, կամ մի այլ համակարգին ընդօրինակելը ուղակի անիմաստ ժամանակի կորուստ կլինի, ինչն էլ կհանգեցնի կրթության որակի անկման:

Քառսը ազատության սխալ հասկացման արդյունքում: Ինքնին ազատությունը աշխարհիս վրա գտնվոր ամենազդեցիկ, ամենաարժեքվոր և ամենաթանկ հասկացություններից և արժեքներից մեկն է, բայց երբ ազատության գաղափարը ոչ ճիշտ մատուցում ենք այն լսարանին, ով դեռ ոչ ֆիզիկապես, ոչ մտային, ոչ էլ հոգեկանի առումով պատրաստ չէ այն ընդունելու դա դառնում է անազատություն, իսկ ավելի վատ է լպիրշություն: Ազատության մասին շատ քչերն են հասկանում, ուր մնաց այդ արժեքը եկող սերունդներին փոխանցելը: Պետք չէ զոհ դառնալով <<նորաձևության>> փոխանցել մի բան որ ինքներս չենք գիտակցում, առավել ևս նրանց ովքեր դեռ պատրաստ չեն ազատությունը ընդունելու:

Ուսումնական հաստատությունների համար շատ դժվար է որակյալ կրթություն ապահովել առանց ընտանիքների լուրջ աջակցության: Կրթության որակի անկման պատճառները նախ և առաջ ընտանիքի վրա բարդելով, պետք է հասկանանք, որ ընտանիքն էլ իր սեփական խնդիրները ունի-վաստակել այնքան որպեսզի երեխային կրթության տա: Այսինքն փակ շրջան է ստացվում երեխային կրթություն տալ-վաստակել այդ կրթության համար-տանից գրեթե ամբողջ օրը բացակայել-արդյունքում որոկով կրթություն չի ստանում երեխան: չպետք է մոռանանք, որ իրենց երեխաների համար վաստակում են այն մանկավարժները, ովքեր հենց դասավանդում են ուրիշների երեխաներին: Այսինքն մանկավարժը դառնում է գերուտոպիական մի անձնավորություն, ով պետք է մանկավարժ լինի այլ երեխաների համար ում ծնողները ամբողջ օրը բացակայում են տանից, և լինի ֆինանսական

աղբյուր սեփական երեխայի համար։ Իմ կարծիքով այդպիսի մարդկանց գոյությունը եթե նույնիսկ հնարավոր է, ապա շատ քիչ հավանական։ Այս ամենը գիտակցելով հենց ծնողը պետք է հասկանա , որ առանց սեփական հսկողության և աջակցության որակյան կրթություն հնարավոր չէ։ Երկրորդ կողմն էլ կա երեխայի մոտ հեղինակություն դառնալու համար մանակավորժը որոշակի ժամանակ է կորցնում, իսկ սեփական ծնողները արդեն հեղինակություն են ծնված օրիս, ուղակի պետք է այդ հեղինակությունը ճիշտ օգտագործել։

Կրթության որակի անցումը այլընտրաքների բազմազանության արդյունքում։ Ժամանակակից հասարակությունը սեփական անձը զբաղեցնելու հազար ու մի ձև ու հնարավորություն ունի։ Թեկուզ եթե վերցնենք միայն հեռախոսը, համացանացը, հեռեուստացույցը։ Էլ չեմ ասում ժամանցի մատչելի տարբերակները։ Նախկինում դպրոցը միակ վայրն էր որտեղ երեխան կարող էր ինքնառեալիզացվել։ Այժմ դրա խնդիրը այլևս չկա։ Համընդհանուր վիդո խաղերը, ցանկացած սպորտային խաղին մասնակցելու մատչելիությունը արդեն այդ հարցը լուծում է։ Մարդն էլ լինելով ոչ այնքան ուժեղ կենդանի, սեփական ուղեղը և մարմինը տանում է այն ճանապարհով, որտեղ արդյուքի հասնելը ավելի հեշտ է, շատ ավելի հաճելի և դրա հետ մեկտեղ արագ։ Նախկինում դպրոցը ժամանցի, շփման միակ վայրն էր, իսկ այժմ այն դարձել է պարտադիր 8ժամյա կալանք։

Եզրակացություն

21-րդ դարը տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների դարաշրջան է: ՏՀՏ-ները դարձել են արդիական կրթության հրամայական և ուսուցման նոր գործիք: Երբեմն ՏՀՏ միջոցները ունենում են նաև բացասական ազդեցություն սովորողի հոգեբանական զարգացման գործում:

Հետևաբար, վերը նշված խնդիրները պահանջում են բոլորի ուշադրությունը՝ փիլիսոփաների, տնտեսագետների, հոգեբանների, սոցիոլոգների, քաղաքական գործիչների և իհարկե՝ մանկավարժների: Փոխակերպված միջավայրում, որտեղ երեխաներին մատչելի են նորանոր ծառայություններ ու փորձառություններ՝ նրանք մեծանում են իրենց ծնողներից տարբեր ձևերով: Սա պատճառ է դառնում խզումների մեծահասակների ու երեխաների՝ ծնողների ու զավակների, ուսուցիչների ու սովորողների այսօրվա սերունդների միջև, որ հանգեցնում է հասարակական մեծ փոփոխությունների: Ժամանակակից տեխնոլոգիաների ճնշման տակ կատարվող մանկան հոգեբանության փոփոխությունները առաջիկայում կարող են հանգեցնել լուրջ հետևանքների թե՛ երեխաների, թե՛ նրանց ծնողների համար: Այդ խնդրով անհրաժեշտ է զբաղվել այսօր, հօգուտ ապագայի, հօգուտ երեխայի: Երեխայի համար ընտրեք այնպիսի մուլտեր և հաղորդումներ, որոնք նա ի զորու է հասկանալ և ըմբռնել: Ճիշտ ընտրված մուլտֆիլը երեխայի մեջ շատ նոր ու կարևոր հատանիշներ կձևավորի՝ ընկերասիրություն, հան դուրժողականություն, թույլերի հանդեպ կարեկցանք և այլն:

Հարցերի պատասխանները որոնելիս երեխան ավելի լավ է հասկանում տեսածը և սովորում է մտածել, վերլուծել: Դրա շնորհիվ նա այլևս կուրորեն չի պատճենի հերոսն երի վարքագիծը, նա կսովորի աշխարհը և իրեն շրջապատող մարդկանց ճանաչել:

Վերը նշվածը իր խորքային ազդեցությունն է ունենում թե՛ մեծահասակների և թե՛ երեխաների հոգեկերտվածքի վրա: Երեխաների ինքնամտածողության ձևավորումը ազդված լինելով տվյալ հանգամանքներից լուրջ խնդիր է առաջացնում <<կենդանի>> հասարակության մեջ ինքնադրսևորվելու համար: Վիրտուալ թվացող կյանքը տեղափոխվում է իրական աշխարհ (դպրոց), սակայն այստեղ նույն կանոնները և օրենքները արդեն չեն գործում: Այստեց էլ գալիս է երեխայի դիալեկտիկական երկատումը. ինչու՞ մի համակարգում (վիրտուալ) դա խրախուսելի է, օրինական և անպատժելի, իսկ մյուս համակարգում (իրական կյանք)՝ ոչ:

Երկատված մտածողությամբ երեխան դառնում է իրական հասարակական կյանքի անկախ և անմեղ զոհը, ով չի գիտակցում սեփական արարքների իրական և խորքային պատճառները:

Հիշե՛ք մի ոսկե կանոն.

Երեխաները ոչ թե խոսքով են դաստիարակվում, այլ իրենց առջև ունեցած օրինակով։

Օգտագործված գրականություն

Բալյան Ա.Ա. «Մանկավարժական հոգեբանության հարցեր» -Երևան: Լույս, 1983.

Դուբովսկայա «Երեխան հեռուստացույցի մոտ»

Մանտուլենկո Վ. «Մեդիակրթությունը ժամանակակից աշխարհում»

Մեթոդ. ձեռնարկ «Դեռահասների առողջություն և զարգացում» Երևան 2014

Միրաքյան Վ. «Ագրեսիվ հեռուստատեսության» հետևանքները

Նալչաջյան Ա. Ա. «Հոգեբանության հիմունքներ»-Երևան 1997

Антон Платов. Дети и родители Сеть. Мир компьютеров. - № 3. 2004 год.

Борода К. В. Интернет-зависимость у детей и подростков, 2008. Нью-Йорк

Гордеев А.В. Увлечение компьютерными играми. психологический аспект. К. 2004

Алексеев А. П. Теория аргументации, М., 2006,

Разумов Компьютер круто. // Наука и жизнь. Номер 6: 2002

Усманова А. Насилие как культурная метафора, М., 2010

Эйзенштейн С. М. Мемуары, т. 1, М., 1997,

http://www.budte-zdorovi.com.ua/obraz-zhizni/261-vliyanie-kompyuternyx-igr-na-psixiku-rebenka.html

http://www.russlav.ru/stat/vliyanie_game.htmlhttp://images.yandex.ru/

http://www.youtube.com/watch?v=MSXkuXV5nCU7